

01/10.1/3805-09

2009-06-11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ  
ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

#### Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Հակոբ Հակոբյանի, Սուքիաս Ավետիսյանի, Լյովա Խաչատրյանի, Գագիկ Մելիքյանի, Էդուարդ Շարմազանովի և Տաճատ Վարդապետյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ:

«Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ՝

Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջիկայում կենսաթոշակային բարեփոխումների շրջանակներում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի քննարկմանը կներկայացնի Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթ: Այդ կապակցությամբ առաջարկում ենք, առայժմ ձեռնպահ մնալ նախագծի քննարկումից և դրան անդրադառնալ Ազգային ժողովի քննարկմանը ներկայացվելիք օրենքների նախագծերի համատեքստում:

Հարկ ենք համարում տեղեկացնել նաև, որ նախատեսվում է վերանայել անձին հաշմանդամ ճանաչելու մոդելը և Հայաստանի Հանրապետությունում գործող հաշմանդամության սահմանման մոդելից անցում կատարել Եվրամիությունում ընդունված՝ աշխատունակության կորստի աստիճանի սահմանման մոդելին:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ՝

**1-ին հոդվածը «հաշմանդամ ճանաչված» բառերից հետո լրացնել «բացառությամբ ուսումնառության կարողության և աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության» բառերով՝ ելնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի «Բժշկասոցիալական փորձաքննության ժամանակ օգտագործվող դասակարգիչները և հաշմանդամության խմբերի սահմանման չափանիշները հաստատելու մասին» N 780-Ն որոշման 7-րդ և 11-րդ կետերի պահանջներից:**

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը նպատակահարմար չի համարում ներկայացված օրենքների նախագծերի փաթեթի ընդունումը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Գևորգ Պետրոսյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ  
Պ-604-28.04.2009-ՍՀ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում  
փոփոխություններ կատարելու մասին**

**Հոդված 1.** «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի նոյեմբերի 19-ի ՀՕ-519-ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 45-րդ հոդվածի 5-րդ մասի՝

1) 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) ծնողներից (որդեգրողներից, խնամակալներից) մեկի՝ հաշմանդամ երեխային մինչև նրա 18 տարին լրանալը կամ խնամակալ ճանաչված անձի՝ առաջին խմբի եւ 3-րդ աստիճանի սահմանափակում ունեցող հաշմանդամին խնամելու ժամանակահատվածը՝ տասը տարուց ոչ ավելի.».

2) 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7) սպայական կազմի, ենթասպայական կազմի եւ գերակետիկ ծառայության զինծառայող ամուսնու հետ համատեղ ապրած ժամանակահատվածը՝ սակայն ութ տարուց ոչ ավելի.».

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2010 թվականի հունվարի 1-ից:

Նախագիծ  
Պ-604-28.04.2009-ՍՀ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն  
կատարելու մասին**

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի 34-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Խնամակալություն սահմանվում է տասնչորս տարին չլրացած անչափահասների, 3-րդ աստիճանի սահմանափակում ունեցող հաշմանդամ ճանաչված, ինչպես նաև հոգեկան խանգարման հետեւանքով դատարանով անգործունակ ճանաչված քաղաքացիների նկատմամբ»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2010 թվականի հունվարի 1-ից:

**Հիմնավորում**

**«Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում  
փոփոխություններ կատարելու մասին» եւ «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում  
փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի ընդունման  
անհրաժեշտության**

Նախագծերի փաթեթով առաջարկվում է՝

ա/ 3-րդ աստիճանի սահմանափակում ունեցող հաշմանդամին խնամակալ ճանաչված անձի խնամելու ժամանակահատվածը հաշվառել որպես ապահովագրական ստաժ:

բ/ սպայական կազմի, ենթասպայական կազմի եւ գերակետիկ ծառայության զինծառայող ամուսինների հետ համատեղ ապրած ժամանակահատվածը չկապել մասնագիտական աշխատանքի տեղավորվելու հնարավորության հետ եւ հաշվառել որպես ապահովագրական ստաժ, սակայն ութ տարուց ոչ ավելի:

Առաջարկվող փոփոխություններով գործող կենսաթոշակային համակարգը կդառնա ավելի հասցեական: